



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 31Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2008
ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի ԹԻՎ 10Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 67-րդ հոդվածը, 68-րդ հոդվածի 3-րդ մասը, 72-րդ հոդվածի 3-րդ մասի 25-րդ կետը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22.1 հոդվածի 1-ին մասով և 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄԷ

1. Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2008 թվականի ապրիլի 12-ի «Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքի վարման կարգը սահմանելու մասին» թիվ 10Լ որոշման վերնագրում և որոշման մեջ «կայքի» բառից հետո լրացնել «կառուցվածքը և» բառերը:

2. Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2008 թվականի ապրիլի 12-ի «Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքի վարման կարգը սահմանելու մասին» թիվ 10Լ որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի ապրիլի 7-ից:

**Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահ**

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

2018թ. ապրիլի 6
ք.Երևան

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն կարգով սահմանվում են ՀՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային www.court.am կայքի (այսուհետ՝ Ինտերնետային կայք) կառուցվածքը, դրա վարման կարգը, Ինտերնետային կայքում գետեղվող տեղեկատվությունը և դրա ձևաչափը:

Սույն կարգը նպատակ է հետապնդում ապահովել դատական իշխանության գործունեության մասին տեղեկատվության ազատությունը և հրապարակայնությունը՝ սահմանելով Ինտերնետային կայքի բովանդակությունը, դրա վերաբերյալ տեխնիկական և կազմակերպչական բնույթի միասնական պահանջները:

1. Ինտերնետային կայքի կառուցվածքը

Ինտերնետային կայքը հանդիսանում է www.court.am-ը: Ինտերնետային կայքի գլխավոր էջն արտացոլում է ՀՀ դատական համակարգի ստեղծման պատմությունը, հիմնական բաժինները, որոնք էլ իրենց մեջ ներառում են համապատասխան ենթաբաժիններ՝ վերաբերելի տեղեկատվությամբ: Մասնավորապես.

1.1. Վճռաբեկ դատարան,

Վերաքննիչ դատարաններ,

Վարչական դատարան,

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններ.

Վերը նշված բաժիններից յուրաքանչյուրն իր մեջ համապատասխանաբար ներառում է տեղեկատվություն դատարանի, դատավորների կենսագրական տվյալների մասին և անհրաժեշտ այլ տեղեկություններ:

1.2. Դատավորների ընդհանուր ժողով.

Սույն բաժնում տեղադրվում են Դատավորների ընդհանուր ժողովի՝ որպես դատական իշխանության ինքնակառավարման մարմնի, կարգավիճակի և գործունեության մասին տեղեկատվություն, ինչպես նաև Դատավորների ընդհանուր ժողովի կողմից կայացված որոշումներ:

1.3. Դատական դեպարտամենտ.

Սույն բաժնում տեղադրվում է տեղեկատվություն Դատական դեպարտամենտի (այսուհետ՝ Դեպարտամենտ) մասին, դատական ծառայության մասին, արտացոլում է

Դեպարտամենտի կառուցվածքը (կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ), ինչպես նաև տեղադրվում են Դեպարտամենտի կողմից անցկացվող գնման գործընթացին վերաբերող հայտարարություններ:

1.4. Գրադարան.

Սույն բաժնում տեղադրվում են Դատարանների նախագահների խորհրդի և Արդարադատության խորհրդի կողմից կայացված որոշումները, Եվրոպական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացված դատական ակտերը, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները, դատավարական ձևաթղթեր, հրապարակումներ, ինչպես նաև դատական իշխանությանն առնչվող այլ իրավական ակտեր:

1.5. Անհրաժեշտ տեղեկություններ.

Սույն բաժնում տեղադրվում են դատարաններում հերթապահության ժամանակացույցը և դատավորներին ամենամյա հերթական արձակուրդ տրամադրելու ժամանակացույցը:

1.6. Դատական վիճակագրություն.

Սույն բաժնում տեղադրվում են դատարանների և դատավորների գործունեության կիսամյակային և տարեկան վիճակագրական տվյալների վերաբերյալ հաշվետվությունները, դատարանների գործունեության վերաբերյալ համեմատական վիճակագրական վերլուծությունները, դատարանների բյուջեն, այդ թվում՝ ֆինանսական ծախսերի համեմատականը նախորդ հաշվետու ժամանակահատվածի հետ՝ ըստ դատարանների, դատավորների միջին աշխատավարձը և դրա համեմատականը նախորդ հաշվետու ժամանակահատվածի հետ, վճարված պետական տուրքի ընդհանուր չափը, դատավորների կարգապահական պատասխանատվության մասով՝ հարուցված կարգապահական վարույթների քանակը՝ ըստ վարույթ հարուցած սուբյեկտների և վարույթի հարուցման հիմքերի, Արդարադատության խորհրդի կողմից կարճված վարույթներով գործերի քանակը՝ ըստ վարույթ հարուցած սուբյեկտների, նշանակված կարգապահական տույժերի տեսակները, կարգապահական պատասխանատվության կրկնակիության դեպքերի ընդհանուր քանակը:

1.7. Թափուր աշխատատեղեր.

Սույն բաժնում տեղադրվում են դատական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու մասին տեղեկություններ՝ թափուր պաշտոնների ցանկը, դրանց ներկայացվող պահանջները, մրցույթի անցկացման կարգն ու ժամկետները, մրցույթի թեստավորման և հարցազրույցի փուլին նախապատրաստվելու համար անհրաժեշտ իրավական ակտերի ցանկը և թափուր պաշտոնի անձնագիրը:

1.8. Նորություններ.

Սույն բաժնում տեղադրվում են դատական համակարգի վերաբերյալ մամուլ հաղորդագրություններ, պաշտոնական նորություններ, հարցազրույցներ և ելույթներ, ՉԼՄ հրապարակումների վերաբերյալ պարզաբանումներ, ինչպես նաև տեղեկատվական բնույթի այլ հրապարակումներ:

1.9. Դատական ակտեր.

Սույն բաժնում տեղադրվում են ՀՀ ընդհանուր իրավասության դատարանների, ՀՀ վարչական դատարանի, ՀՀ վերաքննիչ դատարանների և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված գործն ըստ էության լուծող, ինչպես նաև միջանկյալ դատական ակտերը:

1.10. Դատական ծանուցումներ.

Սույն բաժնում տեղադրվում է քաղաքացիական, քրեական, վարչական և սնանկության գործերի քննության կապակցությամբ նշանակված դատական նիստերի մասին տեղեկատվություն:

Դատական ծանուցումներ բաժինը հնարավորություն է ընձեռում գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի վերաբերյալ տեղեկությունները ստանալ Ինտերնետային կայքի համապատասխան բաժին մուտք գործելու և սահմանված պատուհաններում անհրաժեշտ տվյալները մուտքագրելուց հետո:

1.11. Հղումներ.

Սույն բաժինը նախատեսում է հղումներ Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության կառավարության և այլ պետական մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերին:

1.12. Կայքի քարտեզ.

Սույն բաժնում տեղադրվում է կայքում գետեղված բաժինների ընդհանուր կառուցվածքը:

1.13. Հետադարձ կապ.

Սույն բաժինը ներառում է դատարանների գտնվելու վայրերը, հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի հասցեները, ինտերակտիվ քարտեզը, օժտված է ՀՀ դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնին էլեկտրոնային նամակ ուղարկելու հնարավորությամբ:

2. Ինտերնետային կայքի վարման կարգը

2.1. Ինտերնետային կայքի կառավարումն իրականացվում է ՀՀ դատական դեպարտամենտի կողմից:

2.2. Ինտերնետային կայքում տեղադրված տեղեկատվությունը պետք է լինի արդիական, հավաստի, ամբողջական և անվճար:

2.3. Ինտերնետային կայքի վարման գործընթացը կազմակերպվում է ՀՀ դատական դեպարտամենտի համապատասխան ստորաբաժանումների կողմից, որոնք հավաքագրում, մշակում, տեղադրում և հեռացնում են համապատասխան նյութերը:

2.4. Ինտերնետային կայքում հիմնական տեքստային տեղեկատվությունն արտացոլվում է համակարգչային Յունիկոդ (UNICODE) կոդով:

2.5. ՀՀ դատական դեպարտամենտի համապատասխան ստորաբաժանումների իրավասու աշխատակիցները հետևում են Ինտերնետային կայքում առկա տեղեկատվության

ամբողջականությանն ու դրա թարմացմանը: Ինտերնետային կայքի համապատասխան բաժիններում կամ ենթաբաժիններում փոփոխությունների կամ լրացումների կատարման անհրաժեշտություն առաջանալու դեպքում՝ դրանց արտացոլման պահանջվող ժամկետից առնվազն 3 աշխատանքային օր առաջ, իրավասու աշխատակցի կողմից տեղադրման ենթակա նյութերը՝ սույն որոշման Հավելվածի Աղյուսակով սահմանված ձևաչափով, տրամադրվում են ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայությանը՝ հստակ նշելով կայքում դրանց տեղադրման տեղը, դասավորվածությունն էջի մեջ և անվանումը, որը կարտացոլվի էջում:

2.6. Ինտերնետային կայքում հրապարակման ենթակա չեն այնպիսի տեղեկություններ, որոնք.

1) պարունակում են պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք,

2) խախտում են մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը,

3) պարունակում են հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ,

4) բացահայտում են մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),

5) խախտում են հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները:

2.7. Ինտերնետային կայքում հրապարակված տեղեկություններում անճշտություններ հայտնաբերելու դեպքում համապատասխան ուղղումներն ու շտկումները պետք է կատարվեն այնպես, որ հնարավոր լինի պարզել փոփոխությունների կատարման ճշգրիտ ժամանակը, բովանդակությունը և այն կատարող դատական ծառայողի տվյալները:

3. Կայքում գետեղվող տեղեկատվությունը և դրա ձևաչափը

3.1. Դատական ակտերի հրապարակումը

3.1.1. Դատական ակտեր բաժնում հրապարակման ենթակա են քաղաքացիական, սնանկության, քրեական և վարչական գործերով այն ակտերը, որոնք իրենց մեջ չեն պարունակում պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք, տեղեկություններ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության վերաբերյալ, չեն խախտում մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը, հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները, չեն բացահայտում

մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք):

3.1.2. Գատական ակտերն Ինտերնետային կայքում արտացոլվում են իրավասու դատական ծառայողի կողմից՝ դրանք «Գատական համակարգ» համակարգչային կառավարման ծրագրում տեղադրելուց հետո:

3.1.3. Գատական ակտեր բաժնում գործերի որոնումն իրականացվում է ըստ տարատեսակ որոնման ցուցիչների, դրանք են՝ դատական գործի տեսակ, համար, դատարանի անուն, դատավորի անուն, հայցվորի անուն, պատասխանողի անուն, գործը (հայցադիմումը, դիմումը) դատարանում ստացվելու ամսաթիվ, դատարանի որոշման ամսաթիվ, հոդված և այլն: Որոնման արդյունքում տրվում է դատական գործի ընթացքի և դատարանի կայացրած ակտի մասին մանրամասն տեղեկատվություն:

3.2. Ինտերնետային կայքում գետեղվող տեղեկատվության ձևաչափը

3.2.1. Ինտերնետային կայքում տեղադրվող էլեկտրոնային ֆայլերի անվանումների կազմման ձևաչափը սահմանվում է Աղյուսակով:

**Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական
ինտերնետային կայքում տեղադրվող էլեկտրոնային
ֆայլերի անվանումների կազմման ձևաչափ**

Փաստաթղթի տեսակը	Ֆայլի տեսակը	Բնորոշիչ կոդ	Ֆայլի անվանման օրինակ
կարգադրություն	pdf	kg	ՀՀ նախագահի կարգադրություն kg_hhn_2011_654n
որոշում	pdf	vr	ՀՀ կառավարության 04.08.2011թ. N1084-Ն որոշումը՝ «ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 11ի N1504Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» /ուժի մեջ է 01.01.2012թ./ vr_hhk_2012_1084n Գանգատարկման հանձնաժողովի որոշում (8 սեպտեմբերի 2011թ.) vr_gh_2011_48_7
հրաման	pdf	hr	ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 03.06.2009թ. N372-Ն հրամանը hr_hhen_2009_372n ՀՀ ԿԱ ԳԻ նախագահի 05.09.2011թ. N2061-Ն հրամանը hr_hhpekn_2011_2061n
օրենք	pdf	or	ՀՀ օրենքը «Առևտրային արբիտրաժի մասին» or_2006_ho---n
նախագիծ	pdf, doc	ng	Օրենքի նախագիծ ՀՀ կառավարության որոշման նախագիծ Նախագիծ՝ ՀՀ ... ng_vr_hhk_200-1---n
տեղեկանք	xls	tq	Տեղեկանք՝ դատավորի գործունեության _____ ՀՀ ԳԻ որոշումների մասին tq_tsgk_2019_may_01_dz9
ցանկ	xls, pdf	ck	Դատարանների մոնիթորինգի 2019թ. հոկտեմբեր ամսվա ամփոփ ցուցանիշների աղյուսակ ck_khv_monitoring_2019_10
Տպագիր հրատարակումներ	pdf	th	_____ th_hamarotagir_2018_jul21_sep20 Տարեկան հաշվետվություն 2019 th_hashvetvutyun_hhpek_2019
Վիճակագրական տվյալներ	xls, pdf	vt	_____ աղյուսակը և գրաֆիկական պատկերները vt_hhpek_ekamut_2019_jun_oct 2018թ. IV եռամսյակի _____ մոնիթորինգի ցուցանիշների հիման վրա կառուցված գրաֆիկական պատկերներ vt_khv_monitoring_2018_IV_graph
հաշվետվություն	xls, pdf	hv	Հաշվետվություն _____ իրականացման արդյունքների մասին hv_hhk_2010_gorc_mijoc_ard
վերլուծություն	pdf	vl	2 _____ մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների վերլուծություն

			vl_khv_monitoring_2019_I
տեղեկատվություն	pdf	tv	Տեղեկատվություն _____ արդյունքների մասին tv_shk_tiv_2019_apr»

1. Ինտերնետային պաշտոնական կայքի ֆայլերի անվանման բաղկացուցիչ մասերն են՝

1) Բնորոշիչ կոդ

Տառային հապավումով երկնիչ կոդ, որն ընտրվում է Աղյուսակից ըստ փաստաթղթի տեսակի, իսկ փաստաթղթի տեսակն աղյուսակում առկա չլինելու դեպքում կազմվում է փաստաթղթի տեսակը բնութագրող երկնիչ կոդ, որը չի կրկնում աղյուսակում եղածներին,

2) Ենթատեսակ

Ենթատեսակի անվանման տառային հապավում կամ հակիրճ անվանում,

3) Ընդունող մարմին

Ընդունող մարմնի անվանման տառային հապավում: Օրինակ՝ ՀՀ կառավարության դեպքում ճիշտ հապավումը կլինի հհկ,

4) Տարեթիվ

Օգտագործել տարեթվի քառանիշ ձևաչափ (YYYY),

5) Փաստաթղթի համար

Պետք է ներառի փաստաթղթի համարը, փաստաթղթի տեսակը բնորոշող տառը և գրվի միասին՝ առանց տարանջատող նիշի,

6) Ժամանակային այլ տվյալներ

ա) Ժամանակահատված ամիսներով

Օգտագործել ամիսների համարներ կամ ամիսների միջազգային եռանիշ ձևաչափ: Հնարավոր արժեքներն են՝

01, 02, 03, 04, 05, 06, 07, 08, 09, 10, 11, 12 կամ jan, feb, mar, apr, may, jun, jul, aug, sep, oct, nov, dec

բ) Եռամսյակ

Օգտագործել հռոմեական թվեր: Հնարավոր արժեքները I, II, III, IV

2. Ֆայլերի անվանման ձևաչափ

Բնորոշիչ կոդ, _Ենթատեսակ, _Ընդունող մարմին, _Տարեթիվ, _Փաստաթղթի համար, ժամանակային այլ տվյալներ:

3. Ընդհանուր կանոններ (ֆայլերի անվանումների կազմման վերաբերյալ)

- 1) Անվանումների մեջ օգտագործել միայն անգլերեն տառեր,
- 2) Չօգտագործել հետևյալ նիշերը \ / - : * ? | " < > և բացատ " ",
- 3) Անվանման բաղկացուցիչներն իրարից տարանջատել ընդգծելու նիշով (_),
- 4) Անվանումները կազմել հնարավորինս կարճ և հասկանալի,
- 5) Տրամադրվող նյութի շարունակական բնույթ կրելու դեպքում ֆայլերի անվանման ձևաչափը պահել անփոփոխ: